Մայրենի սկսնակների համար

Միջին դպրոց (5-9-րդ դասարաններ)

Շաբաթական 2 ժամ

<<**Մայրենի սկսնակների համար**>> խմբակը համարվում է արտադասարանական գործունեության կարևոր տեսակներից մեկը: <<**Մայրենի սկսնակների համար**>> խմբակի պարապմունքները նպաստում են սովորողների ուղղախոսությանը, տառապատկերները ամբողջական ընկալելու և դրանք տրված օրինակին համապատասխան վերարտադրելու կարողությունների մշակմանը, տպագիր տեքստից ձեռագիր վերարտադրելու կարողության մշակմանը և զարգացմանը, առարկայի դասավանդման ընթացքում ձեռք բերած գիտելիքների և հմտությունների ամրապնդմանը:

<<**Մայրենի սկսնակների համար**>> խմբակի գործունեության արդյունքում աշակերտների մոտ կզարգանա հետևյալ կարողությունները.

- Կատարել վանկային և հնչյունային վերլուծություն,
- Բառի բոլոր տառերը վերածել իրենց համապատասխան հնչյունների և միավորել վանկերի ու ամբողջական բառի մեջ,
- Սովորած ու նոր ուսուցանվող հնչյուններն ու տառերը միավորել և վանկային կապակցություններ ու բառեր ստանալ,
- Արտասանելիս կամ կարդալիս վանկի կամ բառի մեջ առաջարկված հնչյունը առանձնացնել և փոխարինել այլ հնչյուններով՝ նոր բառեր կամ վանկեր ստանալու համար,
- Ուսուցանվող նոր հնչյունը առանձնացնել բառից և օգտագործել բառասկզբում, բառամիջում, բառավերջում, տարբեր հնչյունների հետ ունեցած վանկային կապակցություններում, բաց և փակ վանկերում և կարդալ,
- Ծանոթ ու անծանոթ հնչյունների հնչյունախմբերից կամ վանկերից անջատել անծանոթ հնչյունը և հետևել ելևէջին, արտաբերման եղանակին:

## Նպատակները

- Ներկայացնել հայոց տառերի ստեղծման պատմությանը:
- Ձևավորել և զարգացնել հարգանք հայ ժողովրդի, հայկական արժեքների նկատմամբ:
- Նպաստել հայերենով գրավոր և բանավոր հաղորդակցվելուն:
- Արժևորել լեզվի դերը յուրաքանչյուր ազգի ինքնության պահպանման գործում:

## Խնդիրները

- Ստեղծել առողջ բարոյահոգեբանական միջավայր:
- Աշխատանք տանել վայելչագրության, հայերենի ճիշտ շեշտադրության ուղղությամբ:

- Ուշադիր լինել,որ խմբակի յուրաքանչյուր անդամ հավասարապես ներգրավված լինի աշխատանքներում:
- Համախակի կազմակերպել հեքիաթի ունկնդրումներ, հայեցի խոսքը ընկալելի դարձնելու ուղղությամբ:

Խմբակի անդամները կկարողանան՝

- Բացատրել նոր ,անծանոթ բառերը  և մասնակցել կարդացածի վերաբերյալ զրույցին,
- Անգիր սովորել բանաստեղծություններ, հանելուկներ, շուտասելուկներ, ասացվածքներ,
- Գործնականում կիրառել լեզվական գիտելիքները,
- Որոշակի թեմայով նախադասություններ կազմել (ծնողների, դպրոցի, երեխաների և այլթեմաներով),
- Դրվագային նկարների շուրջ կամ սեփական դիտումների վերաբերյալ բանավոր պատմություններ հորինել (ուսուցչի հարցերի օգնությամբ),
- Գրել արտագրություններ և թելադրություններ (10-12 բառի սահմանում):

Թեմատիկ պլանավորում

<table>
<tr><th>Բովանդակություն<br>Այբբենական շրջան</th><th>Նպատակ</th><th>Ժամա քանակ</th><th>Նշումներ</th></tr>
<tr><td>Աա հնչյուն –տառի ուսուցում</td><td rowspan="12">• Կարդալու և գրելու սկզբնական կարողությունների ձևավորում:<br>• Լսելու և խոսելու կարողությունների զարգացում:<br>• Դիտողականության և վերլուծական մտածողության կարողությունների զարգացում:<br>• Սովորած ու նոր ուսուցանվող հնչյուններն ու տառերը միավորելու, վանկային կապակցություններ ու բառեր ստանալու կարողությունների մշակում` հնչյունի իմաստազատիչ արժեքի գիտակցումով:<br>• Ուղղախոսության մշակում:<br>• Նախադասությունները միմյանց հետ կապակցելու և իմաստն</td><td>1</td><td></td></tr>
<tr><td>Սս հնչյուն -տառի ուսուցում</td><td>1</td><td></td></tr>
<tr><td>Րր հնչյուն -տառի ուսուցում</td><td>1</td><td></td></tr>
<tr><td>Կկ հնչյուն -տառի ուսուցում</td><td>1</td><td></td></tr>
<tr><td>Իի հնչյուն -տառի ուսուցում</td><td>1</td><td></td></tr>
<tr><td>Նն հնչյուն -տառի ուսուցում</td><td>1</td><td></td></tr>
<tr><td>Անցած տառերի ամրապնդում</td><td>1</td><td></td></tr>
<tr><td>ՈՒ ու հնչյուն -տառի ուսուցում</td><td>1</td><td></td></tr>
<tr><td>Տտ հնչյուն -տառի ուսուցում</td><td>1</td><td></td></tr>
<tr><td>Մմ հնչյուն -տառի ուսուցում</td><td>1</td><td></td></tr>
<tr><td>Պպ հնչյուն -տառի ուսուցում</td><td>1</td><td></td></tr>
<tr><td>Ըը հնչյուն -տառի ուսուցում</td><td>1</td><td></td></tr>
</table>

| | | | |
|---|---|---|---|
| Լ լ հնչյուն –տառի ուսուցում | ընկալելու կարողությունների ձևավորում:<br><br>• Գրավոր խոսքի տեխնիկական, գրաֆիկական, ուղղագրական և բովանդակային առանձնահատկությունները ընկալելու կարողությունների մշակում:<br><br>• Տառապատկերները ամբողջական ընկալելու և դրանք տրված օրինակին համապատասխան վերարտադրելու կարողությունների մշակում, տպագիր տեքստից ձեռագիր վերարտադրելու կարողության մշակում: | 1 | |
| Յ յ հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Հեքիաթի ունկնդրում | | 1 | |
| Է է հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Ե ե հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Վ վ հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Օ օ հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Ո ո հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Անցած տառերի ամրապնդում | | 1 | |
| Հ հ հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Զ զ հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Ու հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Ց ց հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Ժ ժ հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Գ գ հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Ք ք հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Հեքիաթի ունկնդրում | | 1 | |
| Չ չ հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Ղ ղ հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Խ խ հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Դ դ հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Թ թ հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Բ բ հնչյուն -տառի | | 1 | |

| | | | |
|---|---|---|---|
| ուսուցում | | | |
| Փ փ հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Հեքիաթի ունկնդրում | | 1 | |
| Ծ ծ հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Ձ ձ հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Ջ ջ հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Ճ ճ հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| Ֆ ֆ հնչյուն -տառի ուսուցում | | 1 | |
| ԵՎ և տառի ուսուցում | | 1 | |
| | | | |
| Հետայբբենական շրջան | | | |
| Արտագրություն | • Կարդալ ու նախնական կարողությունների կատարելագործում<br>• Գրել ու կարողությունների ամրակայում՝ վայելչագրական պահանջներով<br>• Տեքստի շուրջ տարվող աշխատանքների կազմակերպում և բառապաշարի հարստացում<br>• Լեզվական նախնական գիտելիքների գործնական յուրացում և ամրակայում | 1 | |
| Հայերենի տառերը և հայերենի այբուբենը | | 1 | |
| Հայոց լեզու | | 1 | |
| Արան ու վերջակետը | | 1 | |
| Ով եմ ես | | 1 | |
| Արտագրություն | | 1 | |
| Ծրտը | | 1 | |
| | | | |
| | | | |

| | Մայրենի 1 |
|---|---|
| Նպատակ | • Ձայնավորների ուղղագրության վերաբերյալ գործնական կարողությունների ձևավորում,<br>• Բանավոր խոսքում հայերենի հնչյունների ճիշտ արտասանության պահպանում<br>• Ճիշտ շեշտադրության գործածություն<br>Բառերի իմաստները ընկալելու և խոսքում դրանք ճիշտ գործածելու կարողությունների ձևավորում |
| Վերջնարդյունք | • Կատարել ընդօրինակման բնույթի արտագրություններ<br>• Կատարել ճանաչողական և կիրառական բնույթի վարժություններ՝<br>• Արտասանական վարժություններ՝<br>• Տեքստի բանավոր վերարտադրություն՝ ուղղախոսական կանոնների պահպանմամբ<br>• ուղղագրական վարժություններ<br>• Խոսքը բաժանել նախադասությունների<br>• Պահանջված բառն առանձնացնել նախադասությունից<br>• Կատարել նախադասության բառերի քանակի փոփոխություն<br><br>• Կատարել ընդօրինակման բնույթի արտագրություններ<br>• Կատարել ճանաչողական և կիրառական բնույթի վարժություններ՝<br>• Արտասանական վարժություններ՝<br>• Տեքստի բանավոր վերարտադրություն՝ ուղղախոսական կանոնների պահպանմամբ<br>• ուղղագրական վարժություններ<br>• Խոսքը բաժանել նախադասությունների<br>• Պահանջված բառն առանձնացնել |